ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձ**
   Աիդա Ադամյան - էներգետիկայի վարչության էներգաարդյունավետության և տեխնիկական նորմատիվների բաժնի պետ
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Պոդգորիցա, Մոնտենեգրոյի Հանրապետություն՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 17-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Մոնտենեգրոյի շրջակա միջավայրի պահպանության գործակալություն:
4. **Գործուղման նպատակը.**
   Ճանաչողական այց, որի նպատակն է բարձրացնել մասնագետների փորձը վարչական և կարգավորող մարտահրավերներին դիմակայելու հարցում: Այցի ժամանակ Մոնտենեգրոյի ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց փորձը էներգաարդյունավետության ոլորտում, ներառյալ էներգաարդյունավետության նվազագույն ստանդարտների (MEPs) մշակումը հովվացման և սառեցման ոլորտներում:
5. **Քննարկված թեմաները.**
   - Մոնտենեգրոյի քաղաքականությունը կլիմայի փոփոխության ոլորտում,
   - Մոնրեալի արձանագրության իրականացումը Մոնտենեգրոյում,
   - Էներգաարդյունավետության ոլորտում օրենսդրության մշակում և իրականացում,
   - Կենցաղային տեխնիկայի, այդ թվում նաև սառնարանների, սառցարանների և օդորոկիչների շուկայահանման նկատմամբ նվազագույն Էներգաարդյունավետության պահանջներ,
   - Մոնտենեգրոյի Կիգալի փոփոխության իրականացման ծրագիրը,
   - Էներգաարդյունավետության ոլորտի օրենսդրության կիրառման տեսչական վերահսկողություն և շուկայի վերահսկողության գործառույթները,
   - Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
   - Մոնտենեգրոյի ինժեներների պալատի գործունեությունը,
   - Մոնտենեգրոյի՝ օզոնաքայքայիչ նյութեր, և հիդրոֆտորածխածիններ պարունակող սարքավորումների հաշվառում, ազգային ռեգիստրի ձևավորում և վարում,
6. **Հանդիպումները, ելույթները.**
   Մասնագիտական այցի ընթացքում Հայաստանյան պատվիրակությունը հնարավորություն է ունեցել հանդիպելու Մոնտենեգրոյի էկոլոգիայի, կայուն զարգացման և հյուսիսային տարածաշրջանի զարգացման նախարարության, շրջակա միջավայրի պահպանության գործակալության, էներգետիկայի նախարարության էներգաարդյունավետության վարչության, տնտեսական զարգացման նախարարության, շուկայի վերահսկողության և ինժեներների պալատի ներկայացուցիչների հետ:

7. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Մոնտենեգրոյի գործընկերների հետ շարունակելու փորձի փոխանակումը և ամրապնդելու համագործակցությունը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**
Ճանաչողական այցի նպատակների համաձայն Հայաստանի պատվիրակությունը այցից հետո ուսումնասիրելու է ԵՏՄ տեխնիկական կանոնակարգով նախատեսված սառնամատակարարման և օդորակման կենցաղային տեխնիկայի էներգասպառման նվազագույն պահանջների 2025 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտնելու հետ կապված հնարավոր խնդիրները և ապահովելու է ոլորտի ներկայացուցիչների իրազեկումը սպասվող նորմերի վերաբերյալ: Բացի այդ մշակվելու են նաև սառնամատակարարման և օդորակման արդյունաբերական և առևտրային տեխնիկայի էներգաարդյունավետության սպառման նվազագույն չափանիշները մինչև 2025 թվականի չորրորդ եռամսյակ: Առաջարկում ենք ուսումնասիրել Սերբիայի սառնագենտների վերալիցքավորման կայանի աշխատանքը՝ հաշվի առնելով Հայաստանում 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող սառնագենտների մեկ անգամյա տարաների ներմուծման արգելքը:

<u>Ստորագրություն, ամսաթիվ՝</u>

Աիդա Ադամյան

23.10.2024